

**«ԱՐՄՍԿԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի ԿՈՂՄԻՑ ԹՈՂԱՐԿՎԱԾ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐՈՎ
ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓ ԿԵՐԼՈՒԾԱԿԱՆ**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«ԱՐՄՍԿԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն, դիտարկելով պարտատոմսերի շուկան, որպես Բանկի համար ֆինանսական ռեսուրսների ներգրավման գործուն ալլընտրանք, դեռևս 2015 թվականից մուտք է գործել այդ շուկա և տեղաբաշխել է 3 տրանջի 10,000,000 (տասը միլիոն) ԱՄՆ դոլար ընդհանուր անվանական արժեքով պարտատոմսեր՝ աղյուսակ 1-ում նշված պայմաններով.

Աղյուսակ 1.

ԹՈՂԱՐԿՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ	SWISB1	SWISB2	SWISB3
Թողարկման արժույթ	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար	ԱՄՆ դոլար
Թողարկման ծավալ	2,000,000	3,000,000	5,000,000
Ժամկետայնություն	3 տարի	4 տարի	5 տարի
Արժեկտրանային եկամտաբերություն	7.50 %	8.00 %	8.50 %
Մարման ժամկետ	16.04.2018	16.04.2019	27.04.2020
Ավանական արժեք	1,000	1,000	1,000

Հիմնվելով նախորդ թողարկումների հաջող փորձի վրա՝ 2017 թվականին իրականացրել է պարտատոմսերի տեղաբաշխման երկրորդ հաջող ծրագիրը, որի ընթացքում Բանկը տեղաբաշխել է ևս 3 տրանջի պարտատոմսեր՝ աղյուսակ 2-ում նշված պայմաններով:

Աղյուսակ 2.

ԹՈՂԱՐԿՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ	SWISB4	SWISB5	SWISB6
Թողարկման արժույթ	ԱՄՆ դոլար	Եվրո	ՀՀ դրամ
Թողարկման ծավալ	10,000,000	10,000,000	2,000,000,000
Ժամկետայնություն	7 տարի	5 տարի	4 տարի
Արժեկտրանային եկամտաբերություն	6.75%	5.00%	12.75%
Մարման ժամկետ	15.06.2024	15.06.2023	15.06.2021
Ավանական արժեք	100	100	50,000

2017 թվականին թողարկված SWISB4, SWISB5 և SWISB6 պարտատոմսերը առանձնաձևում են նրանով, որ կորպորատիվ պատատոմսերի շուկայում թողարկված ամենաերկարաժամկետ պարտատոմսերն են:

Երկրորդային շուկա

Ցանկացած արժեթղթի և դրա թողարկողի նկատմամբ ներդրողների հետաքրքրությունների բնութագիրը բացահայտվում է երկրորդային շուկայում այդ արժեթղթերի վերաբերյալ գրանցված բորսայական ցուցանիշներով:

Հետևաբար, ստորև ներկայացվում են Բանկի կողմից թողարկված 6 տրանջի պարտատոմսերի երկրորդային շուկան բնութագրող ցուցանիշների ամփոփ վերլուծություն:

2015-2017թթ. ժամանակահատվածում ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ ֆոնդային բորսայում կատարված գործարքները՝ ըստ տարիների:

2015 թվական

Աղյուսակ 3.

Պարտատոմսերի բորսայական հապավում	Գործարքի միջին գին	Գործարքների քանակ	Պարտատոմսերի քանակ	Ընդհանուր ծավալ (USD)	Վերջին գործարքի գին
SWISB1	7.4%	6	99	99,577.47	7.4%
SWISB2	8.025%	2	40	40,603.80	8.10%
SWISB3	8.45%	8	516	524,050.47	8.0%

2016 թվական

Աղյուսակ 4.

Պարտատոմսերի բորսայական հապավում	Գործարքի միջին գին	Գործարքների քանակ	Պարտատոմսերի քանակ	Ընդհանուր ծավալ (USD)	Վերջին գործարքի գին
SWISB1	6.92%	11	406	411,178.74	4.5%
SWISB2	6.99%	20	1013	1,042,611.09	5.0%
SWISB3	6.51%	37	1110	1,195,559.00	4.75%

2017 թվական

Աղյուսակ 5.

Պարտատոմսերի բորսայական հապավում	Գործարքի միջին գին	Գործարքների քանակ	Պարտատոմսերի քանակ	Ընդհանուր ծավալ	Վերջին գործարքի գին
SWISB1	3.74%	1	1	1,045.04 USD	3.74%
SWISB2	4.25%	1	19	20,893.96 USD	4.25%
SWISB3	4.76%	4	80	88,717.45 USD	4.7%
SWISB4	6.49%	12	1,591	164,821.41 USD	6.24%
SWISB5	4.78%	5	907	92,797.68 EUR	4.69%
SWISB6	12.61%	9	2353	120,631,244.6 7 ՀՀ դրամ	11.6%

Վերը նշված պարտատոմսերի իրացվելիության բավարար մակարդակ ապահովելու նպատակով Բանկն օգտվում է շուկա ստեղծողի ծառայություններից, ինչը հնարավորություն է տալիս ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ ֆոնդային բորսայում յուրաքանչյուր առևտրային նստաշրջանի ընթացքում ապահովել պարտատոմսերի երկկողմանի գնանշումներ, այսինքն՝ շուկա ստեղծող կազմակերպության կողմից օրական ֆոնդային բորսայի առևտրային համակարգում տեղադրում են միաժամանակ պարտատոմսերի գնման և վաճառքի հայտեր՝ նվազագույնը թողարկման ծավալի 0.5%-ի չափով՝ միևնույն առևտրային նստաշրջանի ընթացքում առնվազն կրկնակի անգամ հայտերի տեղադրմամբ:

Միաժամանակ, հետաքրքիր է ուսումնասիրել Բանկի պարտատոմսերի արժեկտրոնային եկամտաբերության և 2017 թվականի վերջի դրությամբ ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ ֆոնդային բորսայում վաճառքի գնանշումների հարաբերակցությունը, որը ներկայացված է աղյուսակ 6-ում:

Պարտատոմսի բորսայական հապավում	Թողարկման ծավալ	Մարման ամսաթիվ	Մինչև մարում մնացած ժամկետ	Արժեկտրոնային եկամտաբերություն	Ընթացիկ վաճառքի զննանշում	Փոփոխություն/ Տոկոսային կետ
SWISB1	2,000,000 USD	16.04.2018	106	7.5%	3.5%	-4%
SWISB2	3,000,000 USD	16.04.2019	471	8%	4.0%	-4%
SWISB3	5,000,000 USD	27.04.2020	848	8.5%	4.7%	-3.8%
SWISB4	10,000,000 USD	15.06.2024	2358	6.75%	6.15%	-0.6%
SWISB5	10,000,000 EUR	15.06.2023	1992	5%	4.65%	-0.35%
SWISB6	2,000,000,000 ՀՀ դրամ	15.06.2021	1262	12.75%	11.6%	-1.15%

Տվյալների ուսումնասիրության արդյունքում տեսանելի է, որ երկրորդային շուկայում բոլոր թողարկումների գծով գրանցել է տոկոսադրույքների նվազում, հատկապես՝ տոկոսադրույքների ամենամեծ նվազումը գրանցվել է առաջին երեք թողարկումների գծով՝ շուրջ 4%-ի չափով:

Վերջինս հիմնականում պայմանավորված է շուկայում տոկոսադրույքների նվազմամբ, պարտատոմսերի ժամկետայնությամբ, ինչպես նաև ներդրողների կողմից Բանկի նկատմամբ ունեցած վստահությամբ:

Ամփոփվելով վերոգրյալը՝ երեք տարիների ընթացքում Բանկը պարտատոմսերի շուկայում ձևավորել է հաջողված փորձ և առաջիկա տարիների ընթացքում նույնպես կցուցաբերի ակտիվություն պարտատոմսերի շուկայում նոր թողարկումներ իրականացնելու ուղղությամբ: